

Թուրքիա երկ յայտնեց, որ Հայկական Յեղասպանության բանաձևին վաերացուց կրնայ խոչընդոտել իրականացումը Պաքու - ձեյիան քարիղա-տարի ծրագրին, որ կը վայելի Միացեալ Նահանգներու Կորակցութիւնը: Ներկայացուցիչներու Տան ժողովէն, որուն ընթացքին հաւանաբար քուէարկութեան դրուէր բանաձևը, քանի մը ժամ առաջ Թուրքիոյ ուժանիւթի նախարար Ճուժուր Էրսուլանը կողմէ կատարուած այս յայտարարութիւնը յստակ ճշշում էր Ներկայացուցիչներու Տան վրայ՝ չվաերացնելու Հայկական Յեղասպանութեան H. Res. 596 բանաձևը:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԻՍՐԱՅԷԼԱՅԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒՆ ԵՒ ՊԱՂԵՍՏԻՆՅԻՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ ԲԱՆՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԵՑԱՆ ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷՋ

Իսրայէլ երէկ լրացաւ կազայի հետ սահմանային անցք մը՝ գործադրուեցան ղնելով Շարմէշէյ-խի համաձայնութիւնը, որուն նպատակն է վերջ տալ երեք շարաթէ ի վեր ծայր տուած բախումներուն:

Կազայի անցքին լրացումը սակայն չհանդարտեցուց միջուկորարը, որ մնաց լարուած եւ բախումները շարունակուեցան: Իսրայէլի արտաքին գործոց նախարարի պաշտօնակատար Շլոմօ Պէն Ամի ըսաւ, որ սակաւին կացութիւնը չէ հանդարտած:

Իսրայէլ լրացաւ կազայի անցքը՝ արտօնելով առեւտուրը եւ բնակարար ինքնաշարժներու անցքը միայն: Իսրայէլի ղնելը փակ մնացին պաղեստինցի գործաւորներուն ղիմաց, որոնք հրէական պետութեան սահմաններէն ներս կ'աշխատին: Մօտաւորագէտ երկու շարաթ առաջ, Իսրայէլ փակած էր պաղեստինեան շրջանները՝ արգիլելով պաղեստինցիներուն մուտքն ու ելքը: Իս-



Պաղեստինցի պատանիներ եւ երիտասարդներ կը փորձեն պաշտպանուիլ իսրայէլացի զինուորներուն փամփուշտներէն:

րայէլ անցարգելներ հաստատած էր նաեւ Այսրյորդանեան երէկ Այսրյորդան միջեւ: Անիկա Չորեքշաբթի օր վերցուց զանոնք, արտօնելով որ պաղեստինցիները մէկ քաղաքէն միւսը անցնին:

Միւս կողմէ սակայն, բախումները շարունակուեցան երէկ Այսրյորդան միջեւ: Գաղթական մը ղիմաց տեղի ունեցած բախումը մը ընթացքին սպաննուեցաւ պաղեստինցի մը՝ 107-ր բարձրացնե-

լով գոհերուն թիւը: Բախումին իսրայէլացի զինուորներ ուղղաթիւներէ կրակ լրացին պաղեստինցիներու վրայ: Միջադէպը տեղի ունեցաւ Նապլուսի մօտ գտնուող Աքբար Քատիմ գաղթականներին ղի-

Տար. ք. էջ 10

ԱՐԱՐ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԸ ԿԱՅԱՅԱԻ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

ԳԱՀԻՐԷ, 19 (ՌՈՅԹԸՐԶ).- Արաբական երկիրներու արտաքին գործոց նախարարները Հինգշաբթի օր ժողով մը գումարեցին Գահիրէի մէջ, պատրաստելու համար շարաթաւերէին կայանալիք արաբական վեհաժողովը, որմէ կ'ակնկալուի դատապարտել Իսրայէլը եւ վայն վաերացնել, որ խաղաղութեան գործընթացին յառաջխաղացքը կախեալ է իրմէ:



Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէհ իր խօսքի պահուն:

տինցի կողմերուն: Պաղեստինցի բարձրաստիճան պաշտօնատար Նապիլ Շաաթ ըսաւ, որ արաբ ղեկավարներին կ'ակնկալել խտացնել շարքերը եւ քաղաքական միացեալ կեցումը որդեգրել օգնելու համար պաղեստինցիներուն քաղաքականապէս ու տնտեսապէս, ինչպէս նաեւ փրկելու համար խաղաղութեան գործընթացը: Ան աւելցուց, որ արաբները պետք է

գտնեն միջոցները, որ պակսի Իսրայէլի հետաւան պաղեստինեան շրջաններին ու Արեւելեան Երուսաղէմին եւ արտօնէ պաղեստինցի միլիոնաւոր գաղթականներու տունդարձը: Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Ամր Մուսա ըսաւ, որ արաբ ղեկավարները պետք է վերստին պահանջեն, որ Իսրայէլ վիշի Արեւելեան Երուսաղէմը, կոր պաղեստինցիները կը նկատեն իրենց անկախ պետութեան մայրաքաղաքը:

Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուսարաբ, պատկերասփորում հարցազրոյցի մը ընթացքին ըսաւ, որ արաբ ղեկավարները պիտի փորձեն վերսկսել Իսրայէլի հետ խաղաղարարութեան եւ ոչ թէ ընդատուելու Իսրայէլի դէմ պատերազմ պահանջող արաբական ցոյցե-

ՓՈՒԹԻՆԻ ՊԱՔՈՒ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԿՐՆԱՅ ԱՆԿԻՒՆԱԴԱՐՉԱՅԻՆ ԸԼԼԱՄ ԿՐԸԵ ԻԿԱՆՈՎ

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով Ազրայէլեանի արտաքին գործոց նախարար Վիլյայէ Կուլիբեկեան Մոսկուայի մէջ տեղի ունեցած հանգիպումէն ետք յայտարարեց, որ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի Ազրայէլեանի հանդէպ ըլլալ Պաքուի եւ Մոսկուայի միջեւ յարաբերութիւններու համար:

Իվանով ըսաւ, որ երկու կողմերը պատրաստակամութիւն յայտնած են ռուս-ազրայէլեանական վեհաժողովին համար: Հանգիպումին քննարկուեցան նաեւ երկկողմանի տնտեսական յարաբերութիւններուն, Լեռնային Ղարաբաղի տագնապին, Կասպից ծովու կարգավիճակին եւ հակամարտակազմական պայքարին առնչուող հարցեր:

Իր կարգին, Վ. Կուլիբեկեան, որ Ռուսիա մեծ ազդեցութիւն ունի Անդրկովկասի, ներառեալ Ազրայէլեանի գործընթացներուն վրայ: Ան յոյս յայտնեց, որ Լեռնային Ղարաբաղի տագնապը պիտի լուծուի Ռուսիոյ գործօն մասնակցութեամբ: Անդրադառնալով հայազան Փութինի Ազրայէլեանի աջակցութեան վրայ, Կուլիբեկեան շեշտեց, որ «այցե-յութիւնը թափ կու տայ ռուս եւ ազրայէլեանական գործակցութեան զարգացման»:

ԹՈՒՐԻՒԱ ՇԱՏ ՀԵՌՈՒ Ե Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻԱՆԱԼՈՒ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԷՆ ԿՐԸԵ ԿԵՐԵՏՈՎԸ

Եւրոպական Միութեան ընդարձակման յանձնաժողովի պատասխանատու Կոնթրլը Վերհոլդը երէկ յայտարարեց, որ Թուրքիա տակաւին շատ հեռու է Եւրոպական Միութեան միանալու չափանիշներէն, եւ թէ անիկա պետք է բարելաւէ մարդկային իրաւանց մարզը եւ ժողովրդավարութիւնը, եթէ կ'ուզէ անդամակցութեան բանակցութիւններուն սկսիլ 2005էն առաջ: Հրատարակուած հարցազրոյցի մը մէջ Վերհոլդը ըսաւ, որ ինք բանակցութիւններուն սկսման գծով յանձնարարութիւն մը կ'ընայ կատարել, եթէ զգայ, որ փոխաւ թուրքիոյ մը ղէմ յանդիման կը գտնուի: Վերհոլդը նշեց, որ Թուրքիոյ մէջ մարդկային իրաւանց բնարարութեանը հարցականի տակ կ'առնեն Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան հարցը:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՓՈՒՐԻՉԻ ՄԷՋ

ՔՈՉԱՐԵԱՆ Կ'ԵՆԹԱՐԿՈՒԻ ՄՐՏԻ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Հայաստանի նախագահ Ռուպէրտ Բոչարեան Փարիզի մէջ կ'ենթարկուի արտի քննութիւններու, յայտնեց նախագահին մօտիկ աղբիւր մը: Սակայն նախագահին բանբեր Յասմին Պետրոսեան յայտնեց, որ առողջական լուրջ հարց չկայ: «Նախագահին առողջութիւնը շատ լաւ է եւ ան շարաթաւորչին պիտի վերադառնայ», ըսաւ Պետրոսեան:

(Ա. ԷՖ. ՓԷ.)

ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳՄՈՒԸԼԸԼԸԼԸ

ՈՒՐՈՒԿՈՒԵՅ 24 ԱՊՐԻԼԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿՄԱՆ ՕՐ

ԵՐԵՒԱՆ, 19 (ԱՐՄԷՆՓՐԷՄ).- Ուրուկուէյի Ծերակոյտը միաձայնութեամբ վաերացուց օրինագիծ մը, որուն համաձայն «Ապրիլ 24» կը յայտարարուի 1915ին Հայոց Յեղասպանութեան նահատակներու յիշատակման օրը: Նիստին օրինագիծի հեղինակ ծերակուտական Ալպարթ Սիւս յայտնեց, թէ այս առաջարկին նպատակն է, որ Ուրուկուէյի կեցումը Հայոց Յեղասպանութեան նկատմամբ, իբրեւ մարդկութեան ղէմ գործադրուած ոճիքի, մնայուն կերպով վերահաստատուի գրաւոր օրէնքի միջոցով: Ծերակուտական Եմմանուէլ Ֆառուս ըսաւ, որ այս երկրորդ ղատապարտումով, երկրորդ անգամ օրէնսդրական միջոցով կը վերահաստատուէ արդարութիւնը «Հայերու ղէմ գործադրուած ողբերգութիւններուն համար»:

Տար. ք. էջ 2

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԲԱՆԱԶԵԼԻ ԿԱԵՐԱՅՄԱՆ ՊԱՐԱԳԱՅԻՆ

ԹՈՒՐԻՒԱ ԿՐՆԱՅ ՍԱՌԵՑՆԵԼ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ ՉԷՆՔ ԳՆԵԼՈՒ ԳՈՐԾԱՐՔԸ ԿՐԸԵ ՊԱՅՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՍԱՐԱՐԸ

Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տունը երէկ հաւանաբար պիտի քննարկէր եւ քուէարկէր Հայկական Յեղասպանութեան մասին բանաձևը: Եթէ բանաձևը երէկ չքննարկուէր, ապա անոր քննարկման վերջին առիթը (նախքան ընթացիկ նստաշրջանի աւարտը) պիտի ներկայանայ յառաջիկայ շաբթուան ընթացքին: Ներկայացուցիչներու Տան կողմէ հրապարակուած տեղեկագիրին համաձայն, երէկուան նիստին բանաձևը (H. Res. 596) պիտի քննարկուէր: ●ԹՈՒՐԻՒԱՅ պաշտպանութեան նախարար Սապա- Տար. ք. էջ 10

NEW YORK TIME CAFE & NIGHT CLUB (RIO LENTO)

• Սրճարանը բաց է ամէն օր առաւօտեան ժամը 11էն սկսեալ

Escape to America, to the streets of New York

• Night Clubը բաց է ամէն Կինոգաբի, Ուրբաթ եւ Շաբաթ երեկոյները

HOLI.DWEEN SPECIAL

• «Dr. Evil's Haunted House» (Ամերիկեան ոճով պատրաստուած յատուկ ցուցադրովայր)

Բաց է ամէն Կինոգաբի, Ուրբաթ եւ Շաբաթ օրերը երեկոյեան ժամը 7:30էն սկսեալ Սակ 1 ամձի 5000 լ.ո.

Ըացել Նաիր Էլ Բէլա RIO LENTO
Տեղ. 04-915656 04-912626

«ԱՊՈՒ ՆԻՏԱԼ» ԿՐՆԱՅ ԹԻՐԱՆՆԵՐ ՀԱՐՈՒԱԾԵԼ ԱՄՍԵՐԻՈՅ ՄԷՋ

Աւստրիոյ ներքին գործոց նախարարութիւնը երէկ յայտնեց, որ կը գտնուի պատրաստ վիճակի մէջ, պաղեստինեան «Ապու Նիտալ» խմբակին կողմէ կատարուելիք գործողութիւններու հաւանականութեան լոյսին տակ: Նախարարութիւնը ըսաւ, որ իր ստացած հաւաստի տեղեկութիւններուն համաձայն, խմբակը կրնայ Աւստրիոյ մէջ թիրախներ հարուածել: Տարեակիցքին Աւստրիոյ մէջ ձեռքարկուած էր «Ապու Նիտալ»ի մէկ անդամը:

(ՌՈՅԹԸՐԶ)

Տար. ք. էջ 2

ԱՐԱԲԱԿԱՆ ՎԵՆԱԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԱՅՍՕՐ ԳԱՀԻՐԷ ԿԸ ՄԵԿՆԻ

Նախագահական պալատի ընդհանուր տնօրենությունը երկ ևս հարգողությամբ մը յայտարարեց, որ նախագահ գործ. Էմիլ Լահուտ այսօր Ուրբաթ կը մեկնի Գահիրէ, գլխաւորելու համար Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաբի հրաւերով գումարուկէր արաբական արտակարգ վեհաժողովին մասնակցող լիբանանեան պատուիրակութիւնը:

Հարգողագրութիւնը նաեւ յայտարարեց, որ պատուիրակութեան մաս կը կազմեն վարչապետ Սեյիմ Հըս (որ արդէն Գահիրէ կը գտնուի), Էլեւմուաքի եւ առողջապահութեան հարցերու նախարարներ Ժորժ Գորրմ եւ Քարամ Քարամ, արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Ջուհէյր Համան, ընդհանուր պալատի վարչական ուժերու ընդհանուր տնօրէն գործ. Ժամիլ Մայլտ եւ Եգիպտոսի մէջ Լիբանանի դեսպան Հիշամ Տիմաշիլ:

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՊԱԳԱՆ ԻՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆՆ Է

Կ'ԸՍԷ ԵՐԵՍՓՈՒՆ ԼԱՀՈՒՏ

Երեսփոխան Էմիլ Լահուտ երէկ յոյս յայտնեց, որ կը գործադրուի բուհարկութեան տարիքը 18ի իջեցնելու առաջարկը:

«Երիտասարդութիւնը անցեալի փորձառութեանէն ստորված է կողմը ըլլալ, եւ տարի մը առաջ նոյն իմաստով ստորագրուած էր յուշագիր մը, որ արդիւնք չտուած», ըսաւ նա, պահանջելով, որ նոր կառավարութիւնն ու խորհրդարանը մինչեւ վերջ հետապնդեն այս ծրագիրը գործադրութիւնը, «որովհետեւ Լիբանանի պայգան իր երիտասարդութիւնն է»:

ԱՐԱԲԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Արաբական կուսակցութիւններու համագումարի ընդհանուր քարտուղարութիւնը երէկ հարգողագրութեամբ մը յայտարարեց Հոկտեմբեր 1էին Պէյրութի մէջ կուսակցութեան իր ժողովներուն որդեգրած յանձնարարութիւնները, հաստատելով, որ Աքսաբի ինթիֆատան վերահաստատած է, թէ սիրոնական թշնամիին հետ խաղաղութեան ընտրանքը արդիւնքի չի հասցնել, այլ՝ դիմադրութեան եւ պայքարի ընտրանքը:

Անիկա կողմը զարգացական, նիւթական եւ քարոզչական գորակցութիւն շնորհելու ինթիֆատային, եւ այս պահանջը ներկայացնելու արաբական վեհաժողովին:

Հարգողագրութիւնը նաեւ գորակցութիւն յայտնեց Լիբանանի, որ պէտք է վերատիրանայ իր բոլոր հողերուն, մինչ այդ շարունակելով դիմադրութիւնը: Անիկա պահանջեց խզել Իսրայէլի հետ բոլոր դիւանագիտական եւ առեւտրական յարաբերութիւնները:

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՅ ԵՂԱՅՐԱՎԿՑՈՒԹԻՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Հաւատացեալ ժողովուրդին կը յայտնենք, թէ աղօթատեղիին նորոգութեան աշխատանքները աւարտած են եւ Կիրակի, 22 Հոկտեմբեր 2000ին, կէսօրէ ետք ժամը 4:00ին պիտի վերսկսուի մեր աղօթաժողովներուն եւ գործունէութիւններուն:

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՅ ԵՂԱՅՐԱՎԿՑՈՒԹԻՒՆ

ՆԻՒ ԵՈՐՔ ՆԻՒ ԵՈՐՔ ՄԱՀԱԶԴ

Տիկին Աստղիկ Յակոբեան եւ գաւակները՝ Հերի եւ Մաթըլ
Տէր եւ տիկին Արրահամ Յակոբեան
Տէր եւ տիկին Տիգրան Յակոբեան եւ գաւակները
Օր. Մարիմա Յակոբեան
Տիկին Սիրվարդ Գոգանեան
Օր. Սիրան Յրէնկիւլեան
Տիկին Սիրվարդ Փուշուեան
Տէր Յակոբեան ընտանիք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, փեսային եւ հարազատին՝

ԳՆԵԼ ՅԱԿՈՐԵԱՆԻ (Ծնեալ՝ Չախէ, 1942ից)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 17 Հոկտեմբեր 2000ին, Նիւ Եորքի մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:

Թաղման արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 20 Հոկտեմբեր 2000ին, Նիւ Եորքի Ս. Գրիգոր Եկեղեցու մէջ, White Palace, կէսօրէ առաջ ժամը 11:30ին:

Ներկայ ընդունիլ իբրեւ մահագոյ:

ԼԻԲԱՆԱՆ ՊԻՏԻ ԶՇՐԱԺԱՐԻ ՄԱԶԱՐԷ ԶԵՊԱԱՅԷՆ

Կ'ԸՍԷ ՀԸՍ

Արաբական արտակարգ վեհաժողովի նախապատրաստութեան համար Գահիրէի մէջ երէկ գումարած արաբ արտաքին գործոց նախարարներու ժողովին արտասանած իր խօսքին մէջ վարչապետ Սեյիմ Հըս նկատել տուաւ, որ այս վեհաժողովը ճակատագրական մարտահրաւերներու եւ պաշտօնատիրոջ ժողովուրդի քննաշնչման համար Իսրայէլի մղած պատերազմին պատճառով կը գումարուի:

«Իսրայէլ վարչագութիւններով կը փորձէ տապալել լուծումի տրամաբանութիւնն ու արդար եւ ամբողջական խաղաղութեան անհրաժեշտ ամէն տուեալ», ըսաւ ան, ներկայացնելով Լիբանանի դէմ իսրայէլեան բանակի բռնարարները, ներառեալ 1993ի եւ 1996ի վարչագութիւնները, եւ հասնելով վիճելու հարաւեւեւ արեւմտեան Պէրաւին իսրայէլեան հեռացումը:

Հըս վերահաստատեց, որ Լիբանան կառուցած կը մնայ Մապարի Շրպայի վերատիրանալու իր իրաւունքին, թէեւ ՄԱԿ

այդ շրջանը նկատած էր «կապույտ գիծ» էն դուրս: Ան պահանջեց իսրայէլեան բանակներուն մէջ արգելափակում լիբանանցի պատանդներու անմիջապէս պատարձակումը:

«Լիբանան կը մերժէ բոլոր այն ճնշումները, որոնք կը փորձեն իր պայգային շահերուն հաշուոյն պարտադրել ապահովական տարակներ», ըսաւ վարչապետը, ընդգծելով, որ հարաւային Լիբանանին իսրայէլեան հեռացումը կիսատ կը մնայ այնքան ատեն, որ արդար լուծում չէ տրուած Լիբանանի ստուերը պաշտօնատիրոջ գաղթականներու հարցին, այսինքն՝ միջազգային որոշումներու հիմամբ տունդարձի իրաւունք չեն ստացած:

Հըս ընդգծեց անհրաժեշտութիւնը՝ վերջ դնելու Իսրայէլի հետ յարաբերութիւններու բնական ունայնացումը գործընթացներուն, եւ միջազգային բեւեռին դէմ դնելու պաղեստինցիներուն դէմ Իսրայէլի գործած վարչագութիւններուն կապուելու համար վերջին

ողբերգութեանց շուրջ վստահելի միջազգային քննիչ յանձնախումբ: Ան նաեւ շեշտեց անհրաժեշտութիւնը՝ վերակենդանացնելու խաղաղութեան քննակցութիւնները, Իսրայէլի պարտադրելու, որ յարգէ սրբավայրերը, եւ զօրավիզ կանգնելու Լիբանանի, յարգելով անոր նկատմամբ արաբներու ստանձնած յանձնառութիւններն ու տուած խստումները:

ՍԵՈՒՏ ՖԱՅՍԱԼ

Ժողովին առաջ Հըս ընդունած էր Մեուտական Արաբիոյ արտաքին գործոց նախարար Մեուտ Ֆայսալ իշխանը, որ յայտարարեց, թէ քննարկած են ժողովին նախապատրաստութիւնները եւ լաւատես են անոր տալիք արդիւններուն մասին:

«Պէտք է Իսրայէլի գործածին եւ առած քայլերուն դիմաց տարբեր կեցումք որդեգրել եւ անոր հասկցնել, թէ իր հետ ստեղծուած յարաբերութիւնները օգտակար չեն եղած արաբական երկիրներուն», ըսաւ ան:

ԱՐԱՔ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ...

Շարունակում Ա. Էջեմ

րուն: Մուպարաբ շեշտեց, որ պատերազմի յայտարարութիւնը իսկ չէ, եւ թէ հարցերը կը լուծուին միայն բանակցութիւններու ճամբով:

ԻՍՐԱՅԷԼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԶԱՅԼԵՐ ԳՆԱԿԱԼԵՐ

Իսրայէլացի պաշտօնատարներ երէկ նախատեսեցին, որ արաբական վեհաժողովին արաբ ղեկավարները դատապարտեն Թէլ Աւիւ, եւ ոչ թէ հրաժարին խաղաղութեան գործընթացին կամ գործնական քայլեր որոշելու Իսրայէլի դէմ:

Իսրայէլացի դիւանագետ մը ըսաւ, որ Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաբ կը

սպասէ որոշումներ, որոնք պաղեստինցիներուն եւ իրեն աղիք կու տան բանակցութիւնները շարունակելու իսրայէլացիներուն հետ:

Իսրայէլեան կառավարութեան բանբեր Նեշման Շայյալունեց, որ Թէլ Աւիւ մօտէն պիտի հետեւի վեհաժողովին:

Իսրայէլի գաղտնի սպասարկութեան՝ Մոսատի համաձայն, Մուպարաբ մտահոգ է, որ պաղեստինեան շրջաններ:

րուն մէջ բախումները կրնան պատճառել տեղական հարցեր Եգիպտոսի եւ Յորդանանի մէջ: Հետեւաբար ան որոշած է, որ Արաբաբ շրջանը պատերազմի մէջ չներքաշէ: Ասոր ապացոյցը եղաւ այն որ Մուպարաբ ճնշում բանեցուց Արաբաբի վրայ, որպէսզի ան ընդունի Շարմէլէյի մէջ Էլիւթընի միջնորդութեամբ գոյացած համաձայնութիւնը, որ չէր համապատասխանէր պաղեստինցիներուն պահանջներուն:

ՈՒՐՈՒԿՈՒԷՅ 24 ԱՊՐԻԼԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ...

Շարունակում Ա. Էջեմ

Ան ըսաւ, որ լաւ պիտի ըլլայ, եթէ միջազգային համայնքը օրինակ առնէ այս փոքր եւ համեմատ երկրին յայտնելու համար իր գորակցութիւնը հիվ ժողովուրդին՝ Յեղասպանութեան վերաբերեալ:

Ճերակուտական Ռաֆայէլ Միչէլին ըսաւ, «Կենսական այս հարցերու նկատմամբ մեր դիրքորոշումը պէտք է արտայայտուի ներգործօն քաղաքականութեան միջոցով, որուն հասնելու համար պէտք է միշտ պահպանել յիշողութիւնը եւ պայքարիլ ճշմարտութիւնը բացայայտելու համար»:

Յիշեցնենք, որ Ուրուկուէյ աշխարհի առաջին երկիրն է, որ 1965ին, խորհրդարանի որոշումով 24 Ապրիլը յայտարարած է հայ նահատակներու ոգեկոչման օր:

ԱՖԵՏԻ ՀԱՅԿ ԹԻԼՊԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ Ա. ՏԱՐՈՒԱՅ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ԾՐԱԳՐԻՆ

Փիթըր եւ Դալար Զալլաւներուն պսակի ուրախ առիթով, Ճիւնիեան Յիշատակի Ձեռնարկի Պէյրութի խորհրդատու մարմինը եւ տնօրենութիւնը՝ 100 տոլար:

ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ Հ. Մ. Ը. Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ 30ԱՄԵԱԿ 9 ԳԵԿՏԵՄԲԵՐ 2000

ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ Հ.Մ.Ը.Մ. ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԿԱՈՒՏ ԽՈՐՀՈՒՐԴ 25 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2000

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ԵՄՐԱՐԱՐՈՒԵՍԻ ՄԱՐԶԻՆ ՄԱՍԻՆ

Ճարտարարութեան նախարար Նաէր Մաշիպիի ներկայութեան երէկ նախարարութեան կեդրոնին մէջ սպորտազբեցաւ գործակցութեան յուշագիր մը նախարարութեան եւ վիճակագրութեան կեդրոնական վարչութեան միջեւ: Յուշագիրը սպորտազբեցին Վ. Կ. Վարչութեան ընդհանուր փնօրէն դոկտ. Մարայ Կրպանեան եւ նախարարութեան ընդհանուր փնօրէնի փեղակար:

Յուշագիրին հիման վրայ վիճակագրութեան կեդրոնական վարչութիւնը նախարարութեան յիշարկները վիճակագրութիւն մը ճարտարարութեան մարզին մասին: Վարչութիւնը արդէն աշխատանքներու սկսած է:

ՔՈՒՊԱ - ԼԻԲԱՆԱՆ ԿԱՊԵՐ

Քուպայի արտաքին գործոց նախարար Ռոսէ Ալմանսօ Կիլոս Մանչէրօ երէկ արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան պաշտօնատարներու հետ քննարկեց երկկողմանի յարաբերութիւնները: Ան շնորհակալութիւն յայտնեց Լիբանանի Քուպայի ցուցարբերած անոր գորակցութեան համար: «Քուպա գորակցի կը կանգնի Լիբանանի, որպէսզի վերատիրանայ իր իրաւունքներուն, յատկապէս բուսգրաւուած մնացած իր հողերու ազատագրումին», ըսաւ ան:

ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

• ԽՈՐՀՂՐԱՐԱՆԻ նախագահ Նեպիհ Պըրրի առողջապահութեան նախարար Քարամ Քարամի հետ քննարկեց առողջապահական հարցերը:
• ՉՐՕՍԱՆԵՐՁՈՒԹԵԱՆ մարզին վարկ տալու համար ստեղծուած Լիբանանի - Սուրիա յանձնախումբը երէկ գումարեց իր ժողովը, որուն քննարկեց քննարկուեցան այս մարզին մէջ երկու երկիրները շահագրգռող հարցեր:
• ՊԵՅՐՈՒԹԻ ջուրի ընկերութիւնը երէկ յայտարարեց, որ մայրաքաղաքի ըմպելի ջուրը գերեւ է մանրէներէ:

ՇԱՔԵՐ ԱՊՈՒ ՍԼԵՅՍԱՆ ՈՉ ԵՒՍ Է

Երէկ երկուցեան Յունական հիւանդանոցին մէջ սրտտագնապի պատճառով մահացաւ նախկին երեսփոխան Շաքեր Ապու Սլէյման: Նախկին երեսփոխանը եղած է հայ ժողովուրդին բարեկամը: Ան գանազան առիթներով ելոյթ ունեցած է Հայ Դատի առնչուող հարցերու տարբեր համախառններու մէջ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲՈԼԷՃ «ԿԱՐԿԱՉ»

Մանկապատանեկան երգչախումբ Գեղարուեստական դեկավար եւ խմբավար ԶԱՔԱՐ ՔԷՇԻՇԵԱՆ

Փորձերը տեղի կ'ունենան ամէն Ուրբաթ կէսօրէ ետք ժամը 4:30ին, եւ Շաքաթ առաւօտեան ժամը 10:00էն 12:00, «Լ. Շաք» կեդրոն: Նոր յայտագիրի պատրաստութեան նախօրեակին կ'ընդունուին նաեւ նոր անդամներ: Դիմել խմբավարին՝ փորձերու ժամանակամիջոցին այցելելով երաժշտանոց կամ հեռաձայնելով 03-442365 թիւին: ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հայ կաթողիկէ Ս. Փրկիչ Եկեղեցու ժողովուրդապատուիրակը կը հրաւիրէ հաւատացեալները, մասնակցելու Ս. պատարագին, եւ ՏԵՐ ՅԱԿՈՐՎՐԴ. ԴԱՐԻՊԵԱՆԻ վախճանման քառասունցի հոգեհանգստեան արարողութեան, որ պիտի մատուցանէ

ԱՐՀԻ. Տ. ՄԱՆՈՒԷԼ ԵՊՍ. ՊԱԹԱԳԵԱՆ Կիրակի, 22 Հոկտեմբեր 2000ին, առաւօտեան ժամը 10:00ին:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՅԹ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Գ. ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

Պրեզիդէնտ քննութիւններուն բարձր յիշատակութեամբ յաջողութիւններուն համար Կիրակի, 22 Հոկտեմբեր կէսօրէ ետք ժամը 4:30ին տեղի պիտի ունենայ մրցանակաբաշխութիւն, ԼԵՄԻ «Վիզնի Չաքարեան» արաբի մէջ (ԼՕՍԻ Ա. Պուլոյորձեան ընկերաբժշկական կեդրոնին կից):

STUDIO Lantern • Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ Հեռ. 01-266866 ԵՒ 03-695399

ՅՈՒՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՕԴԱՆԱԿԵՐ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ ՅՈՅՆ ԿԻՊՐԱԿԱՆ ՌԱԶՄԱՓՈՐՉԵՐՈՒ

Յունական պատերազմական օդանավեր Հինգշաբթի օր մասնակցեցան Կիպրոսի մէջ յոյն կիպրական ռազմափորձերու, յայտնեց Կիպրոսի պաշտպանութեան նախարարութիւնը: Անիկա նաեւ ըսաւ, որ թրքական պատերազմական օդանավեր փորձած են արգելք հանդիսանալ յունական օդանավերուն թռիչքներուն:

Ռազմափորձերու կայացումէն քանի մը օր առաջ, թրքական ռազմական օդանավեր արգելափակած էին յունական օդանավերու՝ արեւելեան Եգէականի մէջ ՕԹԱՆ-եան ռազմափորձերուն մասնակցութիւնը:

Յունաստան եւ Թուրքիա, որոնք ՕԹԱՆի անդամներ են, երկար ատենէ ի վեր հակամարտութեանց մէջ են Կիպրոսի բաժանումին, ինչպէս նաեւ Եգէական ծովուն մէջ հողային իրաւունքներու հարցով:

Յունական էջ. 7 Քոստալ տիպի 2 օդանավեր երէկ թռիչք կատարած են արեւմտեան Փաֆոս քաղաքին մէջ խարխիւի մը վերեւ: Յունաստանի մէջ իրենց խարխիւր վերադառնալէ առաջ: Կ'անկեղալուի, որ անոնք յոյն կիպրական ռազմափորձերուն դարձեալ մասնակցին Ուրբաթ օր (այսօր), հաղորդեց Կիպրոսի ծայնասփեւը:

Յոյն կիպրացիները Յունաստանի հետ պաշտպանութեան հասարակաց համաձայնութիւն մը գոյացուցած են:

Չորեքշաբթի օր, ՕԹԱՆ-եան «Տեսքիմ Կլոքի» ռազմափորձերուն մասնակցող յունական ռազմական օդանավեր վերադարձած էին՝ առանց աւարտելու իրենց առաքելութիւնը, թրքական ռազմական օդանավերու կողմէ իրենց ճամբան խափանելէ ետք:

«Արիւն» լրատու գործակալութիւնը յայտնած է, թէ Յունաստան ՕԹԱՆէն բացատրութիւն պահանջած է, զինակցութեան հրամանատարներու կողմէ՝ փորձի մը վերջին բաժինը ջնջուելէ ետք:

Յունաստան սպունդացած էր բոլորովին հրաժարիլ ռազմափորձերուն մասնակցելէ, սակայն անիկա համաձայնած էր Չորեքշաբթի օրուան փորձերուն մասնակցել: ՕԹԱՆ-եան քննարկումներէ ետք:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԵԳԻՊՏՈՍԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՒՊԱՐԱՔԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՉՄՈՋՄԵՆՉ 3ՄՆԹԱՆԿ Կ ՄՊԱՀՈՎԷ

ԳԱՀԻՐԷ, 19 (ՌՈՅԹԸՐԸ).- Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաֆի իշխող կուսակցութիւնը շախախիչ յաղթանակ մը ապահոված է երեսփոխանական ընտրութիւններուն առաջին հանգրուանին, որ տեղի ունեցած էր Չորեքշաբթի օր:

Ակրնական արդիւնքներուն համաձայն, Մուպարաֆի Ակգալին ժողովրդավար կուսակցութիւնը ապահոված է արժանաւորութիւնը: Ասկայն իսլամականներ յաջողած են գրաւել քանի մը արժանի Աղէքսանդրիոյ մէջ:

Իսլամական Եղբայրութիւնը, որ արգիլուած է 1954էն ի վեր, կը հովանաւորէ 75 անկախ թեկնածուներ:

Պաշտօնական աղբիւրներ յայտնեցին, որ Ա. Ժ. Կուսակցութիւնը յաղթանակ ապահոված է: Անոնք աւելցուցին, որ վերջնական արդիւնքները, որոնք կ'առնչուին 150 երեսփոխաններու ընտրութեան, պիտի յայտարարուին Ուրբաթ օր (այսօր): Երկրորդ համարանքը պիտի կայանայ հոկտեմբեր 29ին, իսկ երրորդը Նոյեմբեր 8ին: Քուէարկողները կ'ընտրեն խորհրդարանին 444 երեսփոխանները, իսկ Մուպարաֆ կը նշանակէ տարւորիչներ՝ 454ի բարձրացնելով թիւը: Նախորդ ընտրութիւններուն ընդդիմադիր կուսակցութիւնները միայն 13 արժանի ունեցած էին խորհրդարանին մէջ:

ԲՐԻՏԱՆԻԱ ՊՈԼԻՍԷՆ ՀԱՍԱԾ 170 ՔԿ. ՀԵՐՈՅԻՆ ԿԸ ԳՐԱՒՈՒԻ

ԼՈՆՏՈՆ, 19 (ՌՈՅԹԸՐԸ).- Բրիտանիոյ մաքսատու նախն պաշտօնատարները Հինգշաբթի օր յայտնած են, թէ գրաւած են 170 ՔԿ. հերոյին, որ շուրջ 15 միլիոն պիւլերի կրնայ ծախել:

7 հոգի ձերբակալուած է մաքսանենգութեան կապակցութեամբ:

Թմրեցուցիչը գտնուած է արեւելեան Ֆելիքսթաուն նահանգի իստին մէջ՝ սերամիքէ առարկաներու մէջ, որոնք Պոլիսէն հասած են Հոկտեմբեր 8ին:

Պաշտօնատարներու համաձայն, թմրեցուցիչը արեւելեան Անգլիոյ մէջ ցարդ զրաւուած ամէնէն մեծ քանակութեամբ «Առաջին կարգի» ապօրինի թմրեցուցիչը եղած է:

ՀԱԿԱՌԱԿ ԱՆՈՐ ՈՐ ԽՈՂՈՎԱԿԸ ՊԻՏԻ ՇՐՋԱՆՅԷ ՌԻՐԱՆԻԱՆ ԲՈՒՉՄԱ ՄՏԱԸՈԳ ՉԷ ՌՈՒՄԻԱՅԵՆ ԵՐՈՊԱ ԿԱՌՈՒՅՈՒԵԼԻՔ ԿԱԶԱՏԱՐ ԽՈՂՈՎԱԿԻՆ ԾՐԱԳԻՐՈՎ

Ուրբանիոյ նախագահ Լեոնիդ Քուչմա երէկ յայտնեց, թէ մտահոգ չէ Ռուսիայէն Եւրոպա՝ իր երկիրը շրջանցող կապատար նոր խողովակի մը կառուցման ծրագիրնէ: Պոլ, դիտել տալով, որ ծրագիրին գործադրումը մասնակի պիտի կարողանայ:

Ռուսիոյ կապի կապիրոմ ընկերութիւնը Չորեքշաբթի օր յայտարարած էր, թէ «առաջադրութեանց գիր մը» ստորագրած է գերմանական Ռուհրդ-կապ եւ Ուիլսըրըշէլ-Ֆրանսական Կապ Տը Ֆրանս եւ իտալական Մասնակցութիւններուն հետ, ստեղծելու համար արտածումի նոր ձևեր մը, որ Ուրբանիան պիտի շրջանցէ, յաւելեալ կապ մը լու համար արեւմուտքի յաճախորդներու:

Կապիրոմի գործադիր տնօրէն Ռեմ վիալիբեյ քապիցս քննադատած է Քիւրեմ ռուսական կապի հայտարարումներուն փոխարէն մեծ գումարներու հասնող պարտքերուն համար: Ան նաեւ քաջալայտօրէն սպասուած է Ուրբանիան, ըսելով, որ ուրբանական հողատարներէն դէպի Եւրոպա մղուող կապը

Կ'իրացնէ: Քուչմա մերժած է մտահոգութիւն արտայայտել կապատար խողովակին ծրագիրը: Անոր գործադրութիւնը երկար ժամանակի կը կարօտի:

Կապիրոմ յատկ չէ դարձուցած, թէ ծրագրը է՞րը գործադրութեան պիտի դրուի: 600 քմ. երկարութեամբ խողովակը, որ տարեկան առաւելաւոր 60 միլիար խորանարդ մէթր կարողանալու մը պիտի ունենայ, կրնայ երկու փոփոխութիւն: Անիկա պիտի անցնի Պիտլոուիայէն, Լեհաստանէն եւ Սլովաքիայէն՝ շրջանցելով Ուրբանիան եւ 2 միլիար տոյար պիտի արժէ:

Քուչմա խոստովանած է, թէ ռուսական կապի իւրացումներու պարագաներ արձանագրուած են: Սակայն ան ձայնակցած է նաեւ Ուրբանիոյ մէջ անոնց՝ որոնք կ'ըսեն, թէ Քիւրեմի կայտարարութիւնը կ'արտօնէ իր պարտքերու հարցը կը գերադառնալու մտայն, վախ յարուցելով ամէն անգամ, որ Ռուսիա ուզէ շրջանին մէջ երկար տեւողութեան վրայ իր շահերը ապահովել:

Քուչմա թղթակիցներու ըսած է, որ Ռուսիա եւ Թուրքիան իստան միակ երկիրներն են, որոնք կարելիութիւն ունին Ուրբանիոյ կապ հայտարարելու: Ան ուզոյիլ հերքած է, թէ Ուրբանիա կ'առաջադրէ Նորվեգիայէն կապ ներածել:

Այս ամսուան սկիզբը Քուչմա Թուրքիանիստանի նախագահին հետ համաձայնութիւն մը գոյացուցած էր կապի հայտարարութեան հարցով: Ըստ համաձայնութեան, Ուրբանիա, որ Թուրքիանիստանի 316 միլիար տոյար պարտք ունի նախապէս կատարուած հայտարարումներու համար, մինչեւ այս տարեվերջ 5 միլիար խորանարդ մէթր եւ 2001ին 30 միլիար խորանարդ մէթր կապ պիտի ստանայ:

Ռուսիոյ նախագահ վլադիմիր Փութին ըսած է, թէ Ռուսիա պիտի օգնէ թուրքական կապի ռուսական կապատարներով Ուրբանիա փոխարկութեան եւ պիտի փորձէ Ուրբանիոյ շուրջ 2 միլիար տոյարի հասնող կապի փոխարէն պարտքեր վերադասարել:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԻՍԱՄԵՆԷԻԻ ԳԼԽԱԻՈՐՈՒԹԵԱՄԲ ԿՐՕՆԱԻՈՐՆԵՐՈՒ ԱՏԵԱՆԸ ԿԸ ԴԱՏԱ ՊԱՐՏՈՒԻ

ԹԵՀՐԱՆ, 19 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրանի բարեկարգչական զխաւոր կուսակցութիւնները դատապարտած են պահպանողական ատեն մը, որ կը գտնուի գերագոյն ղեկավարին հակակշիւն տակ:

Կրօնաւորներու յատուկ ատենը վերջերս դատած էր բարեկարգչական կրօնաւոր Հասան Ենեսէֆի շէքեւարին իսլամութիւնը ուրանալու եւ Աստուծոյ դէմ պատերազմ յայտարարելու ամբաստանութիւններով: Այս պիտի նաեւ պարտաւոր ընդհանրապէս մահուան դատապարտուած է: Կրօնաւորներու յատուկ դատարանը վարականներն անկախ է դատական իշխանութիւններէն եւ ամբողջութեամբ կ'իրանց գերագոյն ղեկավար ալախթու Ալի Խամենէյի հակակշիւնին տակ: Պահպանողականները կ'ըսեն, որ ատենանքը պահանջ կրօնաւորներուն արժանապատուութիւնը, երբ զանոնք կը դատէ իրենց նման կրօնաւորներու կողմէ:

Բարեկարգչական զխաւոր կուսակցութիւնը՝ Իսլամական Իրանի Մասնակցութեան ծակաւոր, յայտարարեց, որ իրենալ դատարանին գոյութիւնը հակասահմանադրական է, եւ թէ անիկա կ'օգտագործուի չէզոքացնելու համար պահպանողական հաստատութեան ընդդիմադիրները: Բարե-

կարգչական ճակատին կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կը նշէր նաեւ, որ շէքեւարի դատապարտութիւնը մահապարտութեան, եւ մտահոգութիւն կը պատճառէ:

Յայտարարութիւնը կը նշէր նաեւ, որ բարեկարգչական կրօնաւորները հաստատուած չեն սպանալու Իրանի քաղաքական վարչակարգին «հանրապետական» դիմագիծին: Այս ամբաստանութիւնները մաս կը կազմեն քաղաքական զրկապատճառներ ունեցող ծրագրի մը, որուն նպատակն է կաշկանջել

ազատութիւնները եւ չէզոքացնել քաղաքական ընդդիմադիրները:

Կրօնաւորներու ատենն ու անոր վճիռները դատապարտեցին նաեւ բարեկարգչական ալլաքրօններ ու կուսակցութիւններ: ԻՐԱՆԻ մշակութիւնը նախարարը, որ հրաժարականը ներկայացուցած է, տակաւին կը սպասէ, որ նախատեսուելը կը սպանալու միւլընդունի զայն: Այս թուրք Մոհաժեբիանի պահպանողականներուն կողմէ ամբաստանուած էր իրբեւ չափազանց ազատական: Մոհաժեբիանիի առաջին հրաժարականը մերժուած էր իսթեմի կողմէ:

ԵԱԿՎ ՎԵՐՍՏԻՆ ԻՐԵՆ ՄԻԱՆԱԼՈՒ ԿԸ ՀՐԱԻՐԷ ԵՌՈՒԿՈՍԱԻՒԱՆ

ՎԻԵՆՆԱ, 19 (ՌՈՅԹԸՐԸ).- Եւրոպայի մէջ Ապահովութեան եւ Գործակցութեան կազմակերպութիւնը Հինգշաբթի օր Եւրոպայի հրաւիրեց զարձակ միաժամ իրեն: Այս քայլը մաս կը կազմէ օժանդակութեան արշալի մը՝ Եւրոպայի հրաւիրեց զարձակ միջազգային համայնքին մաս դարձնելու համար:

Աւստրիոյ արտաքին գործոց նախարարը՝ Պեյլիթ Ֆրանկը - Վալտերը, որ ԵԱԿՎի նախագահն է, նամակով մը պաշտօնապէս հրաւիրուողով է նախագահ Վոյտիալե Քոչթուրիցայի, յոյս յայտնելով, որ Պեյլիթը կար պիտի ողջունէ Նոյեմբեր 27ին Վիեննայի մէջ կայանալիք ԵԱԿՎ արտաքին գործոց նախարարներու ժողովին:

Եւրոպայի ԵԱԿՎի (այլ օրերու եւրոպայի մէջ Ապահովութեան եւ Գործակցութեան Խորհրդակցութիւն) նախագահը 1992ին՝ Պոլսի միջազգային կազմակերպութեան մէջ անոր «շարունակուող յարձակումներուն» պատճառով:

ԹՈՒՐԵԻԱ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՕՄԷՐ ԻԶԿԻ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏ

Թուրքիոյ խորհրդարանը իշխող կառավարական ընկերակցութեան ազգայնական թեւին մէկ անդամը խորհրդարանի նախագահ ընտրած է:

Այսուհանդերձ, ընկերակցութեան անդամ պահպանողականներու կողմէ մարտահրաւէր մը ի յայտ բերուած կառավարութեան շարքերուն մէջ լարուածութիւն մը, մինչ անիկա գործադրութեան կը զնէ Դրամական Միջազգային Փոնտին գորակցութիւնը վաշիտը 4 միլիար տոյար արժողութեամբ բարեկարգումներու ծրագիրը:

550 անդամ հաշուող խորհրդարանին երեսփոխանները Ազգայնական Գործի կուսակցութեան անդամ Օմէր Իզկիի 265 ջուէ տուած են: Ան միայն 2 ջուէ աւելի ստացած է մրցակից Սայր Հայրենիք կուսակցութեան կողմէ առաջարկուած թեկնածուէն: Այս քայլը մարտահրաւէր մըն էր ձախակողմեան վարչապետ Պիլիէնթ Նեմլիտի կառավարական ընկերակցութեան շարքերուն միջեւ համախոհութեան կոչին:

Իսլամական ընդդիմադիր զխաւոր կուսակցութիւնը Առաքինութիւնը, գորավիզ կանգնած է պահպանողական թեկնածուին, ինչ որ ջուէ արկութեան չորրորդ ասուումը մը պարտադրած է:

Պահպանողականներն ու ազգայնականները իրարու հետ կը մրցին կեդրոնի աջ ջուէները ապահովելու համար, սակայն անոնք տարակարծիք են բաղմաթիւ հարցերու շուրջ գործ խորհրդարանը կը դիմադրուէ իր նոր նստաշրջանին ընթացքին: Անոնց կարգին են մահապատիւ ջնջումը, որ բանալի պայման է Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան համար:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԹՈՒՐԵԻԱ ՆԻՒԹԱԿԱՆ ՀԱՏՈՒՅՈՒՄ ԿԱՍԱՐԱԾ Է ԻՐԱՆԻ

Թուրքիա Չորեքշաբթի օր յայտնած է, թէ Իրանի նիւթական հատուցում կատարած է՝ անցեալ տարի սահմանաչին գոտիի մը մէջ թրքական ռազմական օդանավերու կողմէ սխալմամբ կատարուած օդային յարձակումի մը զոհերուն օգնելու համար:

Իրան ներողութիւն եւ հատուցում պահանջած էր թրքական օդանավերու կողմէ յարձակումներուն համար, որոնք 5 զոհ եւ 11 վիրաւոր խնձ էին:

Անգարա նախ հերքած էր, թէ որեւէ կապ ունի յարձակումներուն եւ տակաւին կը շարունակէ մերժել «հատուցում» բառի օգտագործումը, սակայն անիկա ընդունած էր քննութիւն մը բանալ:

Թուրքիա յաճախ օդային եւ ցամաքային գործողութիւններու կը ձեռնարկէ անջատողական քիւրա զինեալներու դէմ՝ այն գոտիին մէջ, ուր իր սահմանները կը միանան Իրանի եւ հիւսիսային Իրաքի:

Արտաքին գործոց նախարարութեան մէկ բանբերը յայտնած է, որ այս հարցը այլեւս պատմութիւն դարձած է՝ «Երկու երկիրներուն միջեւ բարեկամական, փոխադարձ յարաբերութեանց ձիւղ մը ներս»:

Ան մերժած է ըսել, թէ Թուրքիա ինչ զուժար վճարած է Իրանի:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՖԱՀՏ ԹԱԳԱՒՈՐ ԸՆԴՈՒՆԵՑ ԱԼՃԵՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՀՈՒ

